ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 1-ին, չորեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ են ժամանում տ. Գնել եպս. Մերեճյանը՝ Բեյրութից, և Ռումինիայի ու Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը՝ մասնակցելու եպիսկոպոսաց ժողովի «Միասական բարեկարգությանց հանձնաժողով»-ի նիստերին:

* * *

Նոյեմբերի 3-ին, ուրբաթ.—Այսօր ԱՄՆ-ից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում ս. Էջմիածնի միաբան տ. Վազգեն վրդ. Թադոյանը:

Նույն օրը, երեկոյան, հոգևոր ճեմարանի հանդիսությունների սրահում բեյրութաբնակ Հովհաննես Շիրազը (Մերեճյան) մոգական լապտերով ցուցադրում է ներկայիս Արևմտյան Հայաստանը պատկերող գունավոր նկարների մի շարք:

* * *

Նոյեմբերի 15-ին, չորեքշաբթի.—Այսօր, հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից, իրենց պաշտոնատեղիներն են մեկնում, տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը և տ. Բաբգեն արքեպ. Ապատյանը:

* * *

Նոյեմբերի 19-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Երուսաղեմի հայոց սրբոց Հակոբյանց վանքի միաբանության անդամ տ. Շահե եպս. Աճեմյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում ս. Էջմիածնի և Երուսաղեմի հայոց պատրիաքական Աթոռի կատարած հոգևոր, մշակութային և հայրենասիրական առաքելության մասին, մեր ազգային-եկեղեցական տարեգրության մեջ:

Ս. պատարագին ներկա են լինում Վեհափառ Հայրապետը և Երուսաղեմի հայոց տ. Եղիշե սրբազան պատրիարքը:

* * *

Նոյեմբերի 20-ին, երկուշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետից հրաժեշտ է առնում և իր պաշտոնատեղին մեկնում տ. Տիրայր եպս. Մարտիկյանը:

* * *

Նոյեմբերի 21-ին, երեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Իրաքի հայոց առաջնորդ տ. Ասողիկ եպս. Ղազարյանը: Մայր տաճարում իր աղոթքն ու ուխտը կատարելուց հետո, տ. Ասողիկ սրբազանը Վեհարանում ստանում է Հայոց Հայրապետի օրհնությունը:

* * *

Նոյեմբերի 24-ին, ուրբաթ.—Այսօր Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ տ. Բաբգեն արքեպ. Ապատյանի հրավերով հովվական այցելության մեկնեց Բուենոս-Այրես Շիրակի թեմի

հայոց առաջնորդական տեղապահ տ. Նարեկ վրդ. Շաբարյանը:

* * *

Նոյեմբերի 26-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում իր ուխտի անդրանիկ պատարագն է մատուցում նորընծա տ. Տիրան աբեղա Կյուրեղյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Հայր իմ և մայր իմ թողին զիս և Տէր ընկալաւ զիս» (Սաղմոս ԻԶ 10) բնաբանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ Գրիգոր Բեքմեզյանի մահվան քառասունքի առիթով:

Եկեղեցական արարողությունից հետո Վեհարանում Հայոց Հայրապետը ընդունում է հանգուցյալի կնոջը, զավակներին, հարազատներին և ընկերներին ու Իր հայրական մխիթարության խոսքով սփոփում նրանց խորը վիշտը:

Նույն օրը Երևանի ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում իր ուխտի պատարագն է մատուցում տ. Բագրատ աբեղա Գալըստյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Առաջնորդես ինձ ի ճանապարհի քում և գնացից ի ճշմարտութեան քում և ուրախ եղիցի սիրտ իմ երկնչիլ յանուանէ քումմէ» (Սաղմոս ՁԵ 11) բնաբանով: